

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ԱԲԳԱՐՅԱՆՆ

ընդդեմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 34-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳԱՆԳԱՏԻ ՀԱՎԵԼՎԱԾ

Ներկայացված է Մարդու իրավունքների եվրոպական դատարան 2004 թվականի
հոկտեմբերի 20-ին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Դատախաղի վերաբերյալ ցուցումներ եւ ընթացակարգ.....	3
II. Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ենթադրյալ խախտումների մասին շարադրանքը.....	4
III. Փաստերի շարադրանքը.....	5-12
IV. Դիմումատուի եւ Հայաստանի Հանրապետության խնդրանքի շարադրանքը.....	13-16

I. **Դատախազի վերաբերյալ ցուցումներ եւ ընթացակարգ**

1. «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի դատախազ-մրցույթը կազմված է մտացածին փաստերի եւ իրադարձությունների հիման վրա: Դատախազ-մրցույթի գործի իրադարձությունները տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետությունում, եւ գործի նկատմամբ գործում է մինչեւ 2004 թվականի օգոստոսի 1-ը գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:
2. «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի դատախազ-մրցույթն իրականացվելու է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առջեւ՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կանոնակարգի համաձայն: Դատախազ-մրցույթի ժամանակ Դիմումատուն եւ Պատասխանող մասնակից պետությունը, իրենց գրավոր փաստարկները մշակելիս եւ ներկայացնելիս, պետք է առաջնորդվեն մինչեւ 2004 թվականի օգոստոսի 1-ը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ, Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի եւ Խորհրդարանական վեհաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ընդունված Հանձնարարականներով ու Բանաձեւերով, միջազգային եւ սովորութային իրավունքի հանրաճանաչ նորմերով եւ սկզբունքներով, ինչպես նաեւ համապատասխան այլ փաստաթղթերով:
3. Դատախազ-մրցույթին մասնակցող բոլոր թիմերը պետք է առաջնորդվեն սույն ցուցումներով եւ ընթացակարգով, Դատախազ-մրցույթի դատական գործով, ինչպես նաեւ «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» 2004 թվականի եվրոպական իրավունքի դատախազ-մրցույթի Պաշտոնական կանոններով:
4. «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի դատախազ-մրցույթի գործի համար առիթ է հանդիսացել Կոնվենցիայի 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի պարոն Կարապետ Աբգարյանի կողմից 2004 թվականի հոկտեմբերի 20-ին ընդդեմ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատը (N 44202/04): 2004 թվականի հոկտեմբերի 30-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահը գանգատը փոխանցեց Դատարանի Չորրորդ Բաժանմունքին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Կանոնակարգի 52-րդ կանոնի 1-ին կետի համաձայն: Այդ Բաժանմունքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Կանոնակարգի 26-րդ կանոնի 1-ին կետի համաձայն ձեւավորվեց Պալատ՝ գործի քննությունն ապահովելու համար:

II. Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ենթադրյալ խախտումների մասին շարադրանքը

5. Գիմումատուն պնդում է, որ խախտվել է իր արտահայտվելու ազատության, մասնավորապես՝ սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ տարածելու իրավունքը, հավաքների և միավորման ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության, ինչպես նաև արդար դատաքննության, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի և խտրականության արգելման իրավունքները:

6. Դատարանը 2004 թվականի նոյեմբերի 20-ին որոշում կայացրեց պարոն Աբգարյանի կողմից ներկայացված գանգատը ընդունելի հայտարարելու վերաբերյալ և նախաձեռնեց գործի՝ ըստ էության քննությունը կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Պալատը, կողմերի պահանջով, որոշեց գործն ըստ էության քննելու նպատակով 2004 թվականի դեկտեմբերի 15-ին լսումներ հրավիրել՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կանոնակարգի 59-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն:

III. Փաստերի շարադրանքը

7. Կարապետ Աբգարյանը (այսուհետ՝ Գիմումատու) Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Գիմումատուն բնակվում է Երեւան քաղաքի Հարավ Արեւմտյան Ա-1 թաղամասում: Գիմումատուն 45 տարեկան է, ամուսնացած է, ունի երկու որդի եւ մեկ դուստր: Գիմումատուն ունի բարձրագույն կրթություն, 1979 թվականին ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի «Մետաղագործության» ֆակուլտետը: Մասնակցել է Ղարաբաղի ազատամարտին, ունի պարգևատրումներ խիզախության համար: Ազատամարտի տարիներին երկու անգամ վիրավորվել է եւ ներկայումս երկրորդ կարգի հաշմանդամ է:
8. Գիմումատուն 2003 թվականի սեպտեմբերից մինչ Մարդու իրավունքների եվրոպական դատարան (այսուհետ՝ Եվրոպական դատարան) դիմելու պահը զբաղվում էր հասարակական գործունեությամբ, հանդիսանում էր «Պահպանենք բնությունը» հասարակական կազմակերպության նախագահ:
9. Մինչեւ 2003 թվականի հուլիսը Գիմումատուն եղել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի Բնապահպանական պետական տեսչության պետ, իսկ 2003 թվականի հուլիսի սկզբին տեղի ունեցած իշխանափոխության հետեւանքով Գիմումատուն կորցրեց իր աշխատանքը: Գիմումատուն մոտ երկու ամիս համապատասխան պետական մարմիններում աշխատանք չգտնելուց հետո որոշեց զբաղվել հասարակական գործունեությամբ եւ 2003 թվականի սեպտեմբերին հիմնադրեց «Պահպանենք բնությունը» հասարակական կազմակերպությունը: Կազմակերպության հիմնական նպատակն է շրջակա միջավայրի պաշտպանությունն ու բարելավումը, ինչպես նաեւ հասարակության իրազեկության բարձրացումը բնապահպանության հետ կապված հիմնախնդիրների վերաբերյալ:
10. Հիմնադրման պահից կազմակերպությունն ակտիվ պայքար էր մղում շրջակա միջավայրի պահպանության բնագավառում: Սակայն կազմակերպությունն առավել ակտիվ գործունեություն սկսեց ծավալել 2004 թվականի հունիս-հուլիս ամիսներին, երբ տարբեր հրապարակումների եւ հրապարակային միջոցառումների միջոցով կազմակերպության ակտիվիստները փորձում էին հանրության ուշադրությունը հրավիրել Երեւան քաղաքում կատարվող ապօրինի հողահատկացումների եւ դրանց արդյունքում ծառահատումների խնդիրների վրա: Այս խնդիրն աստիճանաբար ձեռք բերեց հասարակական մեծ հնչեղություն, հատկապես, երբ մամուլում հրապարակումներ հայտնվեցին, որ Երեւանի քաղաքապետարանը հողահատկացումների մեծ ծրագիր էր նախապատրաստել մայրաքաղաքի «Ծիրանի հովիտներ» ավանդական անունը կրող տարածքներում եւ, որ այս ծրագրով իշխանությունները նպատակ էին հետապնդում լուծել բազմաթիվ քաղաքացիների, հատկապես փախստականների, բնակարանային

հարցերը: Հրապարակումներում նաեւ տեղ էին գտել մի շարք հողվածներ հետաքննող լրագրողների կողմից, որոնցում նշվում էր մի կազմակերպության մասին, որին քաղաքապետարանը պատրաստվում էր հանձնարարել հատկացված տարածքի ծառահատումները եւ շինարարական աշխատանքները: Ըստ հետաքննող լրագրողների, տվյալ կազմակերպությունը հովանավորվում էր Երեւանի քաղաքապետարանի կողմից, իսկ նրանց ղեկավարներից մի քանիսը Երեւանի քաղաքապետ Վարազդատ Սմբատյանի եւ մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների մերձավոր ազգականներն էին. ուստի հողվածներում արտահայտվում էին նաեւ հնարավոր խոշոր չափերի հասնող կոռուպցիայի մասին մտքեր:

11. Ի պատասխան մամուլում տեղ գտած հրապարակումների, մասնավորապես հետաքննող լրագրողների կողմից «Ֆորում» շաբաթաթերթում պարբերաբար տպագրված հողվածների, Երեւանի քաղաքապետը որոշեց հրավիրել մամուլ ասուլիս: Ասուլիսի ընթացքում քաղաքապետը հայտարարեց, որ հողահատկացումների նման ծրագիր իսկապես գոյություն ունի եւ, որ հատկացված տարածքներում ծրագրվում է կառուցել բազմահարկ շենքեր Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, ինչպես նաեւ փախստականների բնակարանային կարիքները հոգալու համար: Նա նաեւ նշեց, որ շինարարական աշխատանքները կատարելու նպատակով օրենքով սահմանված կարգով հայտարարվելու է մրցույթ՝ լավագույն շինարարական կազմակերպությունն ընտրելու համար: Քաղաքապետը հավաստիացրեց, որ մրցույթը լինելու է թափանցիկ, սակայն միաժամանակ մտահոգություն հայտնեց մամուլի մի շարք հրապարակումների առնչությամբ, բացառելով այն հանգամանքը, ըստ որի նախորդ պայմանավորվածություն է ձեռք բերվել, թե որ կազմակերպությունն է կատարելու շինարարական աշխատանքները: Նա այդպիսի հայտարարությունները համարեց անհիմն եւ զրպարտող եւ զգուշացրեց, որ անհրաժեշտ է ձեռնպահ մնալ հարցի ավելորդ շահարկումներից, որոնք էլ ավելի են բորբոքում առանց այն էլ լարված հասարակական-քաղաքական մթնոլորտը Հանրապետությունում՝ կապված 2003 թվականի հուլիսին տեղի ունեցած իշխանափոխության հետ:

12. Ծառահատումների եւ կոռուպցիայի հարցի շուրջ հանրության ուշադրությունը հրավիրելու եւ այս հիմնախնդրի շուրջ հասարակական բանավեճ խթանելու նպատակով «Պահպանենք բնությունը» կազմակերպությունը որոշեց 2004 թվականի հուլիսի 1-ին կազմակերպել հանրահավաք եւ, այնուհետեւ, երթ դեպի քաղաքապետարան: Հանրահավաքի եւ երթի մասին կազմակերպության նախագահը պատշաճ կերպով իրազեկեց Երեւանի քաղաքապետին՝ նշելով անցկացվելիք հանրահավաքի տեղի, օրվա եւ երթուղու մասին: Սակայն Երեւանի քաղաքապետը նպատակահարմար չհամարեց երթի անցկացումը, իսկ հանրահավաքն առաջարկեց անցկացնել մեկ այլ օր եւ մեկ այլ վայրում:

13. Երթի անցկացումը նպատակահարմար չհամարելը Երեւանի քաղաքապետը պատճառաբանեց այն հանգամանքով, որ.

«...երթերը խաթարում են Երեւան քաղաքի բնականոն կյանքը, հասարակական տրանսպորտի աշխատանքը, բարենպաստ պայմաններ են ստեղծում քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների դեմ ուղղված իրավախախտումների համար, բացասաբար են անդրադառնում քաղաքի տնտեսության բնականոն զարգացման վրա, որը հանգեցնում է համաքաղաքային ծրագրերի իրականացման եւ համայնքային բյուջեների կատարման վրա նման միջոցառումների բացասական ազդեցությանը»:

14. Իսկ հանրահավաքի օրը մեկ այլ օրով փոխադրումը Երեւանի քաղաքապետի կողմից պատճառաբանվեց այն հիմնավորումով, որ ընդդիմությունը տվյալ օրը նպատակ ունեւ հրավիրել բազմամարդ հանրահավաք, եւ հաշվի առնելով 2003 թվականի հուլիսին տեղի ունեցած իշխանափոխության հետեւանքով Հանրապետությունում ստեղծված անկայուն քաղաքական վիճակը`

«...մեկից ավելի զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումը քաղաքի կենտրոնական եւ ծանրաբեռնված շրջանում լրջորեն վտանգում է հասարակական կարգ ու կանոնը...եւ կարող է ստեղծել իրական վտանգի սպառնալիք այլ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին...»:

Ուստի, ղեկավարվելով «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով` Երեւանի քաղաքապետը որոշեց արգելել երթի անցկացումը, իսկ հանրահավաքի անցկացումը առաջարկեց փոխադրել ցանկացած այլ օր: Միաժամանակ նաեւ իրագեկեց, որ որոշումը կարող է բողոքարկվել դատարան:

15. Կազմակերպության ղեկավար պաշտոնատար անձինք որոշեցին, այնուամենայնիվ, հրավիրել հանրահավաք եւ այնուհետեւ կազմակերպել երթ` նախորոք որոշված օրը եւ երթուղով: Այն հանգամանքը, որ այդ օրը մայրաքաղաքի կենտրոնական մասում ընդդիմության կողմից հրավիրվելու էր բազմամարդ հանրահավաք, կազմակերպության ակտիվիստները որոշեցին օգտագործել որպէս հարմար առիթ, որը հնարավորություն կտար իրենց կողմից ներկայացվող հիմնախնդիրներին ծանոթացնել, եւ այդպիսով ընդգրկել էլ ավելի մեծ թվով քաղաքացիներ:

16. Հանրահավաքը կայացավ 2004թ հուլիսի 1-ին եւ անցավ խաղաղ եւ առանց միջադեպերի: Հանրահավաքին մասնակցում էր մոտ 5 հազար մարդ: Հանրահավաքի ընթացքում ելույթներով հանդես եկան քաղաքական գործիչներ, մտավորականներ,

հասարակական կազմակերպությունների ակտիվ անդամներ եւ ուսանողական խորհուրդների ներկայացուցիչներ, որոնց մեծ մասի ելույթները հիմնականում պետական իշխանություններին, մասնավորապես Երեւանի քաղաքապետարանի պաշտոնյաներին ուղղված քննադատություն էին պարունակում: Հանրահավաքում ելույթ ունեցավ նաեւ Դիմումատուն, որն ի թիվս այլ մտքերի, արտահայտեց նաեւ հետեւյալ միտքը.

«..ժամանակն է, որ ժողովուրդն ինքը տեր կանգնի իր իրավունքներին եւ թույլ չտա իշխանություններին թալանել իր սեփականությունը: Ու՞ր է նայում կառավարությունը, ինչու՞ է կասկածելիորեն լռում Երեւանի քաղաքապետը, մի՞թե նա տեղյակ չէ երեւանաբնակներին կործանման տանող այդ հրեշավոր ծրագրի մասին, որը մեզ գրկելու է մեր կանաչ տարածքներից, որոնք օր օրի նվազում են: Մեզ պետք են ժողովրդի մասին մտածող պաշտոնյաներ եւ ոչ թե կոչեցյալ «չինովնիկներ»: Ժողովուրդը պահանջում է քաղաքապետարանից կանգնեցնել իր կոռուսպացված ծրագրի իրագործումը, եւ, այդ դեպքում, գուցե կկարողանանք ասել, որ նրանք ծառայում են հանրությանը, եւ ոչ թե կլանին...»:

17. Հանրահավաքի վերջում կոչ արվեց երթով քայլել դեպի Երեւանի քաղաքապետարանի շենք՝ հանրահավաքի մասնակիցների անունից Երեւանի քաղաքապետին խնդրագիր հանձնելու նպատակով: Հանրահավաքի կարգ ու կանոնը ապահովող բարձրաստիճան մի ոստիկան հիշեցրեց հանրահավաքի կազմակերպիչներին, որ երթն արտոնված չէ եւ զգուշացրեց քաղաքապետարանի որոշումը խախտելու հնարավոր հետեւ անքնների մասին: Երթի կազմակերպիչներն առարկեցին, պնդելով որ օգտվում են խաղաղ երթեր եւ ցույցեր անցկացնելու իրենց սահմանադրական իրավունքից: Երթն, այնուամենայնիվ, տեղի ունեցավ եւ անցավ առանց որեւէ միջադեպերի: Ոստիկանությունը չմիջամտեց երթի մասնակիցների ազատ տեղաշարժմանն ու հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու սահմանադրական իրավունքի իրականացմանը:

18. Հանրահավաքի հաջորդ օրը՝ 2004 թվականի հուլիսի 2-ին ՀՀ Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Կենտրոն համայնքի ոստիկանության բաժնի երկու աշխատակիցներ այցելեցին Դիմումատուի տուն եւ նրան առաջարկեցին ներկայանալ ոստիկանության բաժին: Դիմումատուն հրաժարվեց՝ պատճառաբանելով, որ ոստիկանություն կներկայանա միայն ծանուցագրի առկայության դեպքում, որի մեջ նշված կլինի, թե ով է հրավիրում, ինչ գործով եւ ինչպիսի իրավական կարգավիճակով: Հաջորդ օրը Դիմումատուն ստացավ Երեւանի Կենտրոն համայնքի ոստիկանության ծանուցագիր՝ ոստիկանության բաժին ներկայանալու պահանջի մասին:

19. 2004 թվականի հուլիսի 3-ին Գիմումատուն ներկայացավ ՀՀ Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Կենտրոն համայնքի ոստիկանության բաժին, որտեղ նրան հայտնեցին, որ հրավիրվել է հուլիսի 1-ին կայացած հանրահավաքի եւ երթի վերաբերյալ մի շարք պարզաբանումներ կատարելու նպատակով:
20. Մեկ ժամ անց Գիմումատուին հայտնեցին, որ կայացվել է որոշում նրան վարչական կալանքի ենթարկելու մասին՝ Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180' հոդվածի 1-ին մասի եւ 182 հոդվածի հատկանիշներով: Ոստիկանությունում կազմված վարչական իրավախախտման մասին արձանագրության մեջ նշվում էր, որ Գիմումատուն «...կազմակերպել եւ մասնակցել է չարտոնված հանրահավաքին եւ երթին, որով խախտել է ժողովների, միտինգների, փողոցային երթերի ու ցույցերի կազմակերպման ու անցկացման սահմանված կարգը», ինչպես նաեւ «զազրախոսել եւ չարամտորեն հրաժարվել է ենթարկվել ոստիկանության աշխատողի չարտոնված երթը դադարեցնելու վերաբերյալ օրինական պահանջներին»: Գիմումատուն հրաժարվեց ստորագրել արձանագրությունը, պատճառաբանելով, որ համաձայն չէ արձանագրության մեջ նշված ձեւակերպումներին:
21. Մեկ ժամ անց Գիմումատուն տեղափոխվեց Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան: Դատից առաջ Գիմումատուն պահանջեց, որ իրեն տրամադրեն փաստաբան: Փաստաբանի ներկայանալուց եւ նրա հետ առանձնազրույց ունենալուց անմիջապես հետո Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր Վահրամ Աբրահամյանի սենյակում սկսվեց դատը: Դատաքննության ընթացքում Գիմումատուն պահանջեց կարճել գործի վարույթը եւ դադարեցնել վարչական վարույթը, քանի որ ինքը վարչական իրավախախտում չի կատարել:
22. Լսելով կողմերի ներկայացրած փաստարկները, ինչպես նաեւ հաշվի առնելով զանցառուի անձը, կատարված իրավախախտման բնույթը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող եւ ծանրացնող հանգամանքները, Դատարանը որոշեց Գիմումատուին ենթարկել վարչական տուգանքի սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուր հիսուն տոկոսի չափով՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 180' եւ 182 հոդվածների:
23. Գիմումատուն պատրաստվում էր բողոքարկել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կայացրած որոշումը Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 288-րդ հոդվածով սահմանված 10-օրյա ժամկետի ընթացքում, սակայն հետագա հանգամանքների բերումով նա հնարավորություն եւ բավարար ժամանակ չունեցավ բողոքը ներկայացնելու համար:

2004 թվականի հուլիսի 7-ին, Գիմումատուն Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազության կողմից ստացավ ծանուցագիր դատախազություն ներկայանալու պահանջով: Գատախազությունում նրան հայտնեցին, որ Գլխավոր դատախազությունը ձեռավորել է քննչական խումբ, որը նյութեր է նախապատրաստում 2004 թվականի հուլիսի 1-ին տեղի ունեցած հանրահավաքի եւ երթի ընթացքում ելույթ ունեցողների կողմից հնչած մի շարք հայտարարությունների վերաբերյալ, եւ որ Գիմումատուն հանդես է գալու որպես գործով վկա: Նույն օրը երեկոյան ժամը 18:00-ին, սակայն, Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազության կողմից որոշում կայացվեց նրան ձերբակալելու մասին:

24. 2004 թվականի հուլիսի 7-ի երեկոյան 21:00-ի լուրերի թողարկման ժամանակ հանրային հեռուստատեսությունը տարածեց Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական կապերի եւ լրատվության բաժնի կողմից տրամադրված հայտարարությունը, որում նշվում էր հետեւյալը.

«Պահպանենք բնությունը» հասարակական կազմակերպության ղեկավար պաշտոնատար անձինք, անդամները եւ կազմակերպության համախոհները 2004թ. հուլիսի 1-ին կազմակերպել են չարտոնված հանրահավաք եւ, այնուհետեւ, երթ, որոնք ուղեկցվել են քրեորեն հետապնդելի մի շարք արարքներով եւ իրավախախտումներով, մասնավորապես՝ հասարակական կարգի պահպանությունն իրականացնող իրավապահների օրինական պահանջներին չենթարկվելով, հասարակական կարգի խախտումով եւ իշխանության ներկայացուցիչներին վիրավորող եւ զրպարտող հրապարակային հայտարարություններով:

Նշված հայտարարությունների փաստի առիթով ՀՀ Գլխավոր դատախազությունը 2004 թվականի հուլիսի 7-ին հարուցել է քրեական գործ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 318(2) հոդվածի հատկանիշներով: Քննչական վարչությունում սկսվել է քրեական գործի նախաքննությունը: Ձերբակալվել է «Պահպանենք բնությունը» հասարակական կազմակերպության նախագահ Կարապետ Աբգարյանը:

25. 2004 թվականի հուլիսի 10-ին Գիմումատուին Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազության կողմից առաջադրվեց քրեական մեղադրանք իշխանության ներկայացուցչին հրապարակավ վիրավորելու եւ զրպարտելու հիմքերով. մասնավորապես, Երեւանի քաղաքապետի հասցեին հնչած «կոչեցյալ չինովնիկ» բառերի, ինչպես նաեւ «կոռուպցիան եւ կլանային տնտեսությունը հովանավորելու» ենթատեքստով Երեւանի քաղաքապետ Վարազդատ Սմբատյանի հասցեին արված հայտարարությունների համար:

26. 2004 թվականի հուլիսի 15-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատավճռով Գիմումատուն պատժվեց մեկ տարի ժամկետով ազատազրկմամբ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 318 (2), 135 (3) եւ 136 (2) հոդվածների:

27. 2004 թվականի հուլիսի 20-ին Գիմումատուն Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավճիռը ամբողջությամբ բողոքարկեց Հայաստանի Հանրապետության քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարան: Վերաքննիչ բողոքում Գիմումատուն պնդում է, որ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավճիռը անհիմն է եւ անօրինական եւ Հայաստանի Հանրապետության քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանից խնդրում էր բեկանել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավճիռը եւ կայացնել արդարացման դատավճիռ՝ քանի որ ինքը իրավախախտում թույլ չի տվել, այլ իրականացրել է իր խոսքի ազատության իրավունքը՝ ներառյալ սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից, ինչպես նաեւ իր հավաքների եւ միավորումների ազատության սահմանադրական իրավունքը: Գիմումատուն վերաքննիչ բողոքում պնդում էր նաեւ, որ խախտվել է նաեւ իր անմեղության կանխավարկածը՝ Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազության հասարակական կապերի եւ լրատվության բաժնի կողմից 2004 թվականի հուլիսի 7-ին հրապարակայնորեն արված հայտարարության արդյունքում, որով Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազության հասարակական կապերի եւ լրատվության բաժնի կողմից արված հայտարարության մեջ օգտագործված «քրեորեն հետապնդելի արարք» եւ «իրավախախտում» արտահայտությունները կապվել են իր անձի հետ: Հայաստանի Հանրապետության քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանը գործի քննության արդյունքում կայացրեց որոշում՝ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավճիռը փոփոխել եւ մեկ տարվա ազատազրկման ժամկետը փոխարինել վեց ամիս ազատազրկման ժամկետով, այն հիմքով, որ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում Գիմումատուի կատարած հանցանքի ծանրությանը եւ նրա անձին:

28. Գիմումատուն 2004 թվականի հուլիսի 28-ին Հայաստանի Հանրապետության քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկեց Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի Քրեական եւ զինվորական գործերով պալատ՝ դատավարության մասնակիցների դատավարական իրավունքի խախտման հիմքով:

Գործը վճարելության կարգով քննելիս՝ Վճարել դատարանը Հայաստանի Հանրապետության քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավճիռը թողեց անփոփոխ, իսկ վճարել բողոքը՝ առանց բավարարման:

29. 2004 թվականի սեպտեմբերին Դիմումատուն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվեց նշանակված պատժի մեկ երրորդը կրելուց հետո՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի համաձայն:

VI. Գիմումատուի եւ Հայաստանի Հանրապետության խնդրանքի շարադրանքը

30. Գիմումատուն խնդրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի եւ հայտարարի՝ որ

ա) Հայաստանի Հանրապետության կողմից կատարված սահմանափակումները (Գիմումատուին քրեական պատասխանատվության ենթարկելը) խախտել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված իր արտահայտվելու ազատության իրավունքը՝ ներառյալ սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու եւ տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

բ) Հայաստանի Հանրապետության կողմից կատարված սահմանափակումները, մասնավորապես Երեւանի քաղաքապետի՝ երթը արգելելու եւ հանրահավաքի անցկացումը մեկ այլ օր փոխադրելու եւ Երեւանի Կենտրոն եւ Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից կայացված վարչական տուգանքի ենթարկելու մասին որոշումները խախտել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով իրեն երաշխավորված հավաքների եւ միավորման ազատության իրավունքը:

գ) Հայաստանի Հանրապետությունը խախտել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված խտրականության արգելման իրավունքը՝ մասնավորապես իրեն քրեական պատասխանատվության ենթարկելը պայմանավորված է եղել իր համոզմունքներով եւ հասարակական ակտիվ գործունեությամբ:

դ) Հայաստանի Հանրապետությունը խախտել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության իրավունքով հռչակված անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական կապերի եւ լրատվության բաժնի կողմից արված հայտարարության ժամանակ՝ Գիմումատուի անձը կապելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական կապերի եւ լրատվության բաժնի կողմից արված

հայտարարության մեջ օգտագործված «քրեորեն հետապնդելի արարք» եւ «իրավախախտում» արտահայտությունների հետ:

ե) Հայաստանի Հանրապետությունը խախտել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, ինչը հնարավորություն կտար իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, վիճարկել Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ, 11-րդ, 6-րդ եւ 14-րդ հոդվածներով երաշխավորվող արտահայտվելու ազատության, հավաքների եւ միավորումների ազատության եւ արդար դատաքննության իրավունքները:

31. Հայաստանի Հանրապետությունը խնդրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի եւ հայտարարի՝ որ

ա) Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված Դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքը, քանի որ Դիմումատուի՝ սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ տարածելու ազատության իրավունքի սահմանափակումը պետական մարմինների կողմից կատարվել է օրենքով նախատեսված կարգով, հետապնդել է օրինական (իրավաչափ) նպատակ, այն է՝ Երեսնի քաղաքապետի հեղինակության եւ իրավունքների պաշտպանությունը, եւ նման սահմանափակումն անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում:

բ) Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված Դիմումատուի հավաքների եւ միավորման ազատությունը, քանի որ պետական մարմինների կողմից այս իրավունքների սահմանափակումը նախատեսված է եղել օրենքով, հետապնդել է իրավաչափ նպատակ, անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում, եւ ընտրվել է իրավունքը սահմանափակելու համաչափ միջոց իրավաչափ նպատակին հասնելու համար:

գ) Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված խտրականության բացառման իրավունքը, քանի որ Դիմումատուն քրեական պատասխանատվության է ենթարկվել ոչ թե իր համոզմունքների կամ հասարակական ակտիվ գործունեության, այլ քրեորեն հետապնդելի արարք կատարելու համար:

դ) Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված Դիմումատուի արդար դատաքննության իրավունքը, քանի որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական կապերի եւ լրատվության բաժնի կողմից արված հայտարարությունում հնչած «քրեորեն հետապնդելի արարք» եւ «իրավախախտում» արտահայտությունները նկարագրել են կոնկրետ փաստը եւ չեն հասցեագրվել Դիմումատուին:

ե) Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված Դիմումատուի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, քանի որ Դիմումատուն ունեցել է ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք եւ այն կիրառել է առանց պետական մարմինների միջամտության: Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Դիմումատուի այդ իրավունքը, եւ ներպետական իրավական պաշտպանության միջոցները համապատասխանում են միջազգային իրավունքի նորմերին: